



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. հունիսին /վերլուծություն/

2007թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12979 գործարքներ, որոնց քանակը 2006թ. հունիսի համեմատ աճել է 16.7%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ՝ 15.5%-ով:

2007թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4920 օտարման գործարքների 86.8% կազմել են առուվաճառքները, 12.5%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.4%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 34.7% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. հունիսին, 2007թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 10.2%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 8.2%-ով:

2007թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 64.5% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 5.3%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ նվազել՝ 4.6%-ով:

2007թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2006թ.	հունիս 2007թ.	մայիս 2007թ.
Կենտրոն	368100	454800	453600
Արաբկիր	291200	372500	362500
Քանաքեռ-Զեյթուն	175500	273000	261200
Նոր-Նորք	164900	228700	225200
Ավան	146600	217000	209400
Էրեբունի	144700	221700	217600
Շենգավիթ	173400	244000	234700
Դավթաշեն	180900	246200	240100
Աջափնյակ	164600	237000	230100
Մալաթիա-Սեբաստիա	161500	226700	216900
Նուբարաշեն	108700	124900	122000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	189100	258800	252100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. մայիսի համեմատ աճել են 2.7%:

2007թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 487 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. մայիսի համեմատ աճել է 7.5%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 5.6%-ով:

2007թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2006թ.	հունիս 2007թ.	մայիս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	60200	106900	102400
	Ապարան	25900	28600	28600
	Թալին	23200	36100	36100
Արարատ	Արտաշատ	45400	85400	81500

	Մայիս	53900	92600	88700
	Վեդի	37200	58100	58100
	Արարատ	39400	56900	54600
Արմավիր	Վաղարշապատ	78700	126300	125600
	Արմավիր	52400	89800	86300
	Մեծամոր	33500	58400	56600
Գեղարքունիք	Սևան	32600	60900	58700
	Գավառ	24800	34500	33600
	Մարտունի	38600	50300	48900
	Վարդենիս	20300	26300	26200
	Ճամբարակ	13200	14700	14700
Լոռի	Վանաձոր	47000	71200	69600
	Ստեփանավան	24100	34300	33700
	Սպիտակ	32700	44800	44800
	Ալավերդի	20400	24900	24900
	Տաշիր	19400	24500	24000
	Թումանյան	5100	5400	5400
	Շամլուղ	2700	3000	3000
	Ախթալա	10100	11600	11600
Կոտայք	Աբովյան	89000	145700	140300
	Նոր Հաճն	60100	99500	95300
	Բյուրեղական	42600	73300	70100
	Եղվարդ	55600	89700	85700
	Հրազդան	34700	49600	47700
	Ծաղկաձոր	71100	94000	89600
	Չարենցավան	38900	60900	58900
Շիրակ	Գյումրի	46300	68800	66200
	Արթիկ	29700	44800	42800
	Մարտիկ	21100	25700	24800
Սյունիք	Գորիս	51700	72900	69500
	Կապան	39500	65400	63100
	Սիսիան	32600	50600	50600
	Մեղրի	26500	36900	36900
	Ագարակ	19500	23900	23900
	Քաջարան	24400	31000	31000
	Դաստակերտ	6200	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	33900	58100	55400
	Եղեգնաձոր	52200	73400	70300
	Ջերմուկ	59600	102800	102800
Տավուշ	Դիլիջան	41500	66300	63600
	Իջևան	49100	89500	85800
	Բերդ	29700	33000	33000
	Նոյեմբերյան	16100	27800	27800
	Այրում	18000	18000	18000

2007թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. մայիսի համեմատ աճել են 3.0%:

2007թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 488 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 93, մյուս մարզերում միասին վերցրած՝ 395: 2007թ. մայիսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 3.6%-ով, ընդ որում Երևանում՝ 1.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 4.1%-ով: 2006թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է

11.4%-ով, ընդ որում Երևանում նվազել՝ 10.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 18.3%-ով:

2007թ. հունիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունիս 2006թ.	հունիս 2007թ.	մայիս 2007թ.
Կենտրոն	383300	468900	462700
Արաբկիր	296300	376500	365200
Քանաքեռ-Զեյթուն	178900	275200	264000
Նորք-Մարաշ	185000	233000	227700
Ավան	148800	219800	211800
Էրեբունի	147500	225300	222500
Շենգավիթ	175200	245200	236900
Դավթաշեն	183300	250800	244300
Աջափնյակ	167000	241700	233900
Մալաթիա-Սեբաստիա	164400	228900	220100
Նուբարաշեն	110200	127400	125600
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	194500	263000	255900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. մայիսի համեմատ աճել են 2.8 % :

2007թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունիս 2006թ.	հունիս 2007թ.	մայիս 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	64200	109100	104700
	Ապարան	27700	33200	33000
	Թալին	24500	39500	38900
Արարատ	Արտաշատ	46600	88300	84300
	Մասիս	55000	95500	91300
	Վեդի	38500	62400	61000
Արմավիր	Արարատ	40700	60300	59200
	Վաղարշապատ	80000	130200	127400
Գեղարքունիք	Արմավիր	53900	92100	89600
	Սևան	37300	63100	60700
	Գավառ	26100	38100	37800
Գեղարքունիք	Մարտունի	39800	53600	52800
	Վարդենիս	21700	30300	30100

	Ճամբարակ	14600	17600	17300
Լոռի	Վանաձոր	48300	76100	73900
	Ստեփանավան	26200	38100	37800
	Սպիտակ	34000	49300	48800
	Ալավերդի	21900	29500	28900
	Տաշիր	20900	27500	27000
	Թումանյան	6700	8300	8100
	Շամլուղ	4200	5600	5200
	Ախթալա	11600	14400	14200
Կոտայք	Աբովյան	91000	149100	144000
	Նոր Հաճն	61300	104400	102400
	Բյուրեղավան	43800	75400	72600
	Եղվարդ	56700	93300	89800
	Հրազդան	36200	53500	52300
	Ծաղկաձոր	72400	127000	118200
	Չարենցավան	39900	62900	60400
Շիրակ	Գյումրի	47900	74000	70800
	Արթիկ	30800	46400	45200
	Մարալիկ	22900	27900	27400
Սյունիք	Գորիս	52900	74700	72200
	Կապան	40600	67500	65500
	Սիսիան	33600	55700	55100
	Մեղրի	27500	40100	39600
	Ագարակ	21000	26800	26600
	Դաստակերտ	8500	9600	9600
Վայոց Ձոր	Վայք	35000	60100	59300
	Եղեգնաձոր	54000	75200	71200
	Ջերմուկ	35700	53200	50600
Տավուշ	Դիլիջան	42500	69500	67200
	Իջևան	50400	90700	86700
	Բերդ	31100	36500	36300
	Նոյեմբերյան	17100	31200	30900
	Այրում	19200	19200	19200

2007թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. մայիսի համեմետ աճել են 3.1%:

Ընդհանուր առմամբ, 2007թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 2041 միավոր /1389.05 հա/ հողեր, որից Երևանում` 186 միավոր /17.27 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 102 միավոր /9.45 հա/ հողեր, որից Երևանում` 55 միավոր /5.79 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 815 միավոր /1163.15 հա/, որից Երևանում` 12 միավոր /2.39 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 803 միավոր /70.70հա/, որից Երևանում` 127 միավոր /10.87 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 354 միավոր /56.38 հա/, որից Երևանում` 44 միավոր /3.66 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 25 միավոր /43.76 հա/, որից Երևանում` 3 միավոր, /0.34 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 43 միավոր /54.96 հա/,

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 1 միավոր /0.10 հա/ ընդհանուր մակերեսով:

2007թ. հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1933 միավորի /1336.32 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 171 միավոր /15.72 հա/, նվիրատվության գործարքներ՝ 95 միավորի /50.54 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /0.98 հա/ և փոխանակության գործարքներ՝ 13 միավորի /2.20 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.56 հա/:

Հանրապետությունում 2007թ. հունիսին, 2006թ. հունիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 14.2%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 2.2%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 25.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 13.8%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 393.59 հա, որից 385.31 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 36.2% կամ 699 գործարքներ /766.77 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 44 գործարքներ /3.83 հա/, իսկ 63.6% կամ 1230 միավորը /568.80 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 126 միավոր /11.89 հա/:

2007թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 4 գործարք /0.75 հա/:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>											
	Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր				Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի				Արդյունաբերական օբյեկտների հողեր			
									Բնակավայրերի հողեր		հասարակական կառուցապատ. հողերի						Բնակավայրերի հողեր		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/				
Երևան	0	0.00	3	0.34	12	1.20	29	2.28	10	2.16	0	0.00	104	8.36	12	1.36				
Արագածոտն	34	115.64	0	0.00	4	0.48	26	1.08	74	72.29	0	0.00	61	5.94	4	0.48				
Արարատ	36	82.40	4	2.35	84	7.71	30	1.57	112	77.93	0	0.00	82	6.29	5	0.09				
Արմավիր	27	228.43	3	0.11	0	0.00	7	0.18	125	156.88	0	0.00	91	7.94	10	0.06				
Գեղարքունիք	12	107.32	1	4.68	3	0.34	42	2.48	23	23.72	0	0.00	9	0.96	4	0.26				
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.11	15	0.91	24	24.08	0	0.00	7	1.37	7	0.38				
Կոտայք	67	88.83	6	3.70	32	2.52	53	4.81	149	83.42	3	0.40	205	18.97	15	1.45				
Շիրակ	1	0.50	2	32.08	19	0.41	22	0.49	11	8.81	0	0.00	4	0.24	2	0.19				
Սյունիք	2	0.24	2	0.10	0	0.00	9	1.28	8	6.16	0	0.00	1	0.24	3	0.02				
Վայոց Ձոր	5	15.20	0	0.00	1	0.05	14	0.12	5	0.93	0	0.00	4	0.31	4	35.08				
Տավուշ	5	2.13	1	0.01	10	0.83	34	1.54	28	18.16	0	0.00	21	1.84	1	0.04				
Ընդամենը	189	640.69	22	43.37	167	13.65	281	16.74	569	474.54	3	0.40	589	52.46	67	39.41				

Ստորև ներկայացվում է 2007թ. հունիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	43	3.76	3	0.34	11	1.14	29	2.28	1	0.06	0	0.00	0	0.00	1	0.06	0	0.00
Արագածոտն	4	0.02	0	0.00	0	0.00	4	0.02	60	117.18	34	115.64	0	0.00	4	0.48	22	1.06
Արարատ	16	0.27	1	0.07	1	0.01	14	0.19	138	93.76	36	82.40	3	2.28	83	7.70	16	1.38
Արմավիր	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	36	228.71	27	228.43	3	0.11	0	0.00	6	0.17
Գեղարքունիք	5	0.71	0	0.00	0	0.00	5	0.71	53	114.11	12	107.32	1	4.68	3	0.34	37	1.77
Լոռի	2	0.11	0	0.00	1	0.09	1	0.02	15	0.91	0	0.00	0	0.00	1	0.02	14	0.89
Կոտայք	12	0.72	0	0.00	3	0.13	9	0.59	145	97.16	66	86.85	6	3.70	29	2.39	44	4.22
Շիրակ	12	32.27	2	32.08	3	0.03	7	0.16	32	1.21	1	0.50	0	0.00	16	0.38	15	0.33
Սյունիք	6	1.12	2	0.10	0	0.00	4	1.02	7	0.49	2	0.24	0	0.00	0	0.00	5	0.25
Վայոց Ձոր	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	18	15.33	5	15.20	0	0.00	1	0.05	12	0.08
Տավուշ	15	0.19	1	0.01	1	0.03	13	0.15	32	2.52	2	0.33	0	0.00	9	0.80	21	1.39
Ընդամենը	113	38.50	9	32.60	20	1.43	89	5.18	537	671.44	185	636.91	13	10.77	147	12.22	192	11.54

Հանրապետությունում 2007թ. հունիսին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարքներ /3.78 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. հունիսին 2006թ. հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 5.0%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 87.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 40.1%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 44.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 2.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.2 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների												
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/										
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին								

Արագածոտնի մարզ										
Աշտարակ	29	106.64	37.0	2779.5	694.8	61	50.87	362.2	6772.5	2616.8
Ապարան						1	1.36	90.6	767.6	360.2
Թալին	5	9.00	34.3	76.3	47.3	10	16.36	90.6	758.5	380.4
Ծաղկահովիտ						1	3.53	77.0	948.2	168.2
Արարատի մարզ										
Արտաշատ	11	4.41	934.0	939.2	935.6	53	21.89	335.1	5418.0	1423.3
Մասիս	5	19.23	29.9	2379.1	603.8	34	11.89	181.1	6772.5	1813.0
Վեդի	20	58.76	40.0	1525.1	486.9	24	44.00	203.8	4515.0	1221.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	83.00	30.2	31.5	30.6	29	16.37	294.3	4063.5	890.1
Բաղրամյան	10	116.50	35.4	597.5	260.3	16	77.96	90.6	677.3	565.7
Վաղարշապատ	12	28.93	37.4	651.8	269.4	71	57.54	443.7	9030.0	1534.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						6	2.08	190.2	496.7	368.4
Ճամբարակ	1	10.00	234.0	234.0	234.0	4	12.00	45.3	541.8	148.6
Մարտունի								45.3	1806.0	470.2
Սևան	10	96.44	327.6	386.3	372.6	2	1.90	45.3	451.5	192.1
Վարդենիս	1	0.88	461.4	461.4	461.4	11	7.75	27.2	532.8	247.5
Լոռու մարզ										
Այվերդի						4	1.23	163.0	2483.3	1054.4
Գուգարք						12	16.03	226.4	2709.0	925.9
Սպիտակ						1	0.21	226.4	1490.0	512.8
Ստեփանավան						4	4.08	90.6	2257.5	361.0
Տաշիր						3	2.53	45.3	451.5	203.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	41	39.87	73.8	1595.0	528.6	62	16.92	271.7	11287.5	3294.6
Եղվարդ	24	45.76	39.8	1220.2	262.5	77	56.10	172.1	11287.5	2341.7
Հրազդան	1	1.22	158.9	158.9	158.9	10	10.41	113.2	2709.0	920.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.50	160.0	160.0	160.0	3	2.78	249.0	1693.1	447.4
Ամասիա						1	2.81	36.2	237.0	113.1
Անի						6	3.11	108.7	361.2	236.0
Աշոցք								45.3	112.9	116.8
Արթիկ						1	0.11	63.4	1083.6	172.2
Սյունիքի մարզ										
Գորիս						3	4.55	90.6	673.3	340.2
Կապան	2	0.24	4800.0	4800.0	4800.0			54.3	841.6	224.1
Մեղրի						4	1.07	181.1	1784.2	485.2
Սիսիան						1	0.53	45.3	631.2	226.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	14.80	34.4	215.0	80.4	2	0.42	117.7	2524.8	1286.7
Վայք	1	0.40	366.4	366.4	366.4	3	0.51	54.3	1430.7	514.2
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.20	496.1	496.1	496.1			45.3	841.6	352.4
Իջևան	1	0.13	800.0	800.0	800.0	7	4.09	240.0	1683.2	808.8
Նոյեմբերյան						21	14.07	45.3	3509.5	522.5

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. հունիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	4	4800.0	116.7	116.7	116.7	59	56787.0	113.2	3612.0	2300.1
Ապարան						1	850.0	113.2	632.1	190.0
Թալին						1	1750.0	45.3	361.2	92.3
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	45	44041.0	147.0	458.5	185.8	17	16475.0	135.8	2709.0	886.1
Մապիս	36	32070.0	200.4	445.5	283.8	57	39460.0	135.8	9030.0	1135.4
Վեդի	2	936.0	900.0	1171.3	1035.7	7	6730.0	113.2	993.3	642.8
Արմավիրի մարզ										
Արմավիր						18	14198.0	135.8	2257.5	1074.8
Բաղրամյան						2	3100.0	81.5	270.9	130.0
Վաղարշապատ						71	62053.0	135.8	4515.0	1432.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	2810.0	135.8	903.0	354.2
Ճամբարակ	1	1000.0	90.0	90.0	90.0			45.3	135.5	94.8
Մարտունի	2	2400.0	42.5	42.5	42.5	2	2110.0	90.6	451.5	231.1
Սևան						1	1200.0	90.6	903.0	143.8
Վարդենիս						2	3476.0	45.3	225.8	104.3
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1070.0	67.9	270.9	125.0
Գուգարք						6	12599.0	67.9	2347.8	535.6
Սյլիտակ	1	200.0	294.0	294.0	294.0			63.4	451.5	121.9
Ստեփանավան								45.3	270.9	100.1
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	25	22000.0	696.0	2325.0	1908.2	86	76647.0	135.8	6772.5	1742.4
Եղվարդ						93	88750.0	135.8	6772.5	1874.5
Հրազդան	4	1902.0	152.0	1549.8	743.4	26	24305.0	135.8	9030.0	1225.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	12	3394.7	277.3	4332.8	2401.6	3	1389.0	113.2	1535.1	324.1
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	1035.0	67.9	180.6	95.8
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	4	420.0	427.1	735.0	589.7			67.9	925.6	157.1
Սյունիքի մարզ										
Գորիս								67.9	541.8	230.3
Կապան								67.9	632.1	200.9
Մեղրի						1	2380.0	67.9	406.4	112.8
Սիսիան								67.9	406.4	132.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	500.0	296.0	296.0	296.0	4	3082.0	67.9	1128.8	282.8
Վայք								77.0	632.1	114.7
Տավուշի մարզ										
Բերդ						3	1650.0	45.3	632.1	85.4
Իջևան	9	7992.0	1430.0	2200.0	1686.7	16	14084.0	67.9	1354.5	395.1
Նոյեմբերյան						2	2650.0	45.3	632.1	127.5

2007թ. հունիսին հողերի նկատմամբ նախկինում անհատույց սեփականաշնորհման գործարքներ չեն գրանցվել:

2007թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 971 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.5%: Ընդ որում, վարձակալության գործարքների 37.9% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. հունիսին 2007թ. մայիսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 26.6%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 18.8%-ով:

2007թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 102 բնակարանների, 27 անհատական բնակելի տների, 296 հասարակական, 37 արտադրական նշանակության օբյեկտների, 505 միավոր /2332.50 հա/ հողերի և 4 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 16 վարձակալության գործարքների /այդ թվում 11 միավոր /0.55 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. մայիսի համեմատ նվազել է 30.4%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ աճել՝ 5.3 անգամ:

2007թ. հունիսին հանրապետությունում վարձակալված 2332.50 հա հողերից 7.93 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2324.57 հա հողերի 9.17 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 867.93 հա, որից 746.89 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 717.46 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	2	240.00	63	506.89
Արարատ	1	10.00	15	37.48
Արմավիր	0	0.00	4	3.24
Գեղարքունիք	18	186.48	56	121.91
Լոռի	0	0.00	51	321.21
Կոտայք	0	0.00	25	27.34
Շիրակ	4	30.00	51	336.58
Սյունիք	2	250.98	11	26.58
Վայոց Ձոր	0	0.00	5	11.70
Տավուշ	0	0.00	2	27.96
Ընդամենը	27	717.46	283	1420.89

2007թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2149 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. մայիսի համեմատ աճել է 12.7%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 56.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.3%/, առանձնատների /24.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.4%/ և հողերի /11.8%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 891 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. մայիսի համեմատ աճել է 13.1%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 20.9%-ով:

2007թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 1438.90 հա հողեր, որից 11.52 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 79.4% կամ 1143.18 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 752.97 հա, որից 752.71 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 10 և 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. մայիսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 15.4%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ նվազել՝ 31.8%-ով: 2007թ. հունիսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 46.7%՝ Երևանի, 26.7 %՝ Շիրակի, 13.3%՝ Արարատի, 6.7-ական %՝ Կոտայքի և Տավուշի մարզերում:

2007թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2264 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. մայիսի համեմատ աճել է 26.8%-ով, իսկ 2006թ. հունիսի համեմատ՝ 10.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.4%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն